

II. 2003 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
«2003 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված 401 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1898) վիճակագրական աշխատանքներից 392-ը (պարբերականությունը հաշվի առած՝ 1872) կամ 97.8%-ը (պարբերականությունը հաշվի առած՝ 98.6%-ը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Չկատարված 9 վիճակագրական աշխատանքներից 4-ը տարեկան պարբերականությամբ են, 2-ը՝ կիսամյակային, 2-ը՝ եռամսյակային և 1-ը՝ ամսական:

Ընդ որում, չկատարված 2 եռամսյակային աշխատանքներ գտնվել են ավարտի փուլում (համակարգչային ծրագրային փաթեթի մշակման ընթացքում առաջացած բարդություններով պայմանավորված (տեխնիկական առաջադրանքի ակտրիթմի բարդացում)), իսկ 1 կիսամյակային աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգվել է (հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 23.06.03թ. թիվ 229 գրության համաձայն ՀՀ ՎՊԽ 01.07.03թ. թիվ 11 արձանագրային որոշումը):

ՀՀ ԱՎԾ-ում վիճակագրական աշխատանքները (ցուցանիշները) տարվում են (հաշվարկվում են) Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) մշակած «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» (SSԸՀ) համապատասխան: Այն վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական համակարգ է, որին բազմամյա նախապատրաստական միջոցառումների իրագործման արդյունքում, 2001թ. մարտի 29-ից Հայաստանն անդամագրվեց (տես՝ Ինտերնետ ցանցի ԱՄՀ <http://dsbb.imf.org./gddsweb/country.htm> էջը), իսկ 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունը դարձել է ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (SSՀՍ) անդամ:

ՀՀ ԱՎԾ 2003թ. կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածներին, ինչպես նաև «2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությանը) համապատասխան:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 27 աշխատանքները (111001-113003 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ.

1. մեկ աշխատանք ամսական կտրվածքով՝

¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 11:

- ✓ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշն օպերատիվ և նախնական տվյալներով,

2. մեկ աշխատանք եռամսյակային կտրվածքով՝

- ✓ նախնական և նախնական հաշվետու տվյալներով ճշգրտված ՀՆԱ-ի ցուցանիշը
 - արտադրական մեթոդով՝ տնտեսության ճյուղերով (արտադրանքի թողարկում, միջանկյալ սպառում, ավելացված արժեք),
 - վերջնական սպառման մեթոդով (ըստ սպառման տարրերի կառուցվածքի),

3. տարեկան կտրվածքով, ընդհանուր տնտեսության մակարդակով,

հաշվարկվել և մշակվել են 25 աշխատանքներ.

- ✓ եռամսյակային ՀՆԱ-ի հաշվարկը (2001թ. եռամսյակները վերջնական հաշվետու տվյալներով և 2002թ. եռամսյակները՝ վերանայված 2001թ. հաշվետու տարեկան տվյալների հիման վրա)
 - արտադրական մեթոդով (տնտեսության ճյուղերով),
 - վերջնական սպառման մեթոդով (ըստ սպառման տարրերի կառուցվածքի),
- ✓ 2002թ. ՀՆԱ-ի հաշվարկն ընթացիկ և նախորդ տարվա գներով (նախնական տվյալներով)
 - արտադրական մեթոդով (տնտեսության ճյուղերով),
 - վերջնական սպառման մեթոդով (ըստ սպառման տարրերի կառուցվածքի),
- ✓ 2002թ. ՀՆԱ-ի հաշվարկն ընթացիկ և նախորդ տարվա գներով (վերջնական հաշվետու տվյալներով)
 - արտադրական մեթոդով (տնտեսության ճյուղերով),
 - վերջնական սպառման մեթոդով (ըստ սպառման տարրերի կառուցվածքի),
 - եկամուտների գոյացման մեթոդով,
- ✓ Ճյուղային կտրվածքով՝ 2002թ. ՀՆԱ-ի հաշվարկը Եվրոպական համայնքի տնտեսական գործունեության տեսակների ընդհանուր դասակարգմամբ (ՏԳՏԴ) (ըստ գործունեության տեսակների),
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկն ընթացիկ գներով, սեզոնային ճշգրտումներով ,
 - 2002թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
 - 2001թ. ՀՆԱ-ն վերջնական հաշվետու տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը 1998թ. մշտական, միջին տարեկան գներով,
 - 2002թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
 - 2001թ. ՀՆԱ-ն վերջնական հաշվետու տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը 1998թ. մշտական, միջին տարեկան գներով՝ սեզոնային ճշգրտումներով,
 - 2002թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
 - 2001թ. ՀՆԱ-ն վերջնական հաշվետու տվյալներով,
- ✓ արտադրության հաշվի և եկամուտների գոյացման հաշվի հաշվարկները,
 - ազրեզացված,
 - ըստ հատվածների,
- ✓ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի, եկամուտների օգտագործման հաշվի և եկամուտների երկրորդային բաշխման հաշվի հաշվարկները,
 - ազրեզացված,

- ✓ եկամուտների բաշխման հաշվի, տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի և բնաիրեղեն ձևով եկամուտների վերաբաշխման հաշվի, տնօրինվող ճշտված եկամուտների օգտագործման հաշվի և կապիտալի ծախսերի հաշվի հաշվարկները,
 - *ըստ հատվածների,*
- ✓ կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվարկ,
 - *ազրեզացված,*
- ✓ ՀՆԱ-ի կազմում «չդիտարկվող տնտեսության» ծավալի հաշվարկ և մեթոդաբանության կատարելագործում,
- ✓ 2001թ. ԱՀՀ-ի ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների հաշվարկը, ենթահատվածների կտրվածքով,
- ✓ բնակչության տնային գույքի կուտակման հաշվարկը,

Ազգային հաշիվների մշակումը կատարելագործելու և իրականացնելու նպատակով, 112015 ծածկագրով նախատեսված էր սատելիտային հաշիվների, մասնավորապես՝ «բնապահպանա-տնտեսական օժանդակ հաշիվների» փորձնական մշակման աշխատանքը: Նշված աշխատանքի ամբողջական իրականացումը պահանջում է մեծ ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայություն, որոնց ապահովումը 2003թ. ընթացքում հնարավոր չեղավ: Չնայած դրան, ՀՀ ԱՎԾ կողմից տարվա ընթացքում ուսումնասիրվել են նշված հաշիվների կազմման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրները և դրանցից տեղեկատվության ստացման հնարավորությունները, ինչպես նաև մշակվել է հարցաթերթ իրավաբանական անձանց բնապահպանական գործունեության վերաբերյալ տեղեկությունների ստացման վերաբերյալ:

Բացի վերը նշվածից, 2003թ. ընթացքում որոշակի աշխատանքներ են տարվել առողջապահական սատելիտային հաշիվների կազմման ուղղությամբ: Մասնավորապես, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ստացվել են համապատասխան հաշիվների հիմնական ցուցանիշները ներառող ամփոփ աղյուսակները, որոնց լրացման և Հայաստանի համար դրանց հետագա կատարելագործման նպատակով օգտագործվել է ինչպես պաշտոնական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված և վիճակագրական կամ վարչական տեղեկատվական աղբյուրներում առկա տեղեկատվությունը, այնպես էլ 2002թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված «Առողջապահական կազմակերպությունների ու դեղատների և տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի» ընտրանքային հետազոտության արդյունքները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ «Տնտեսության հիմնական միջոցների արժեքը (հաշվեկշռային և մնացորդային) ըստ տնտեսության ճյուղերի» (ծածկագիր՝ 113001) և «ՀՀ ազգային հարստությունը» (ծածկագիր՝ 113002) վիճակագրական աշխատանքները 2003թ. ընթացքում ամբողջովին չեն ավարտվել, պայմանավորված ինչպես «Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև թիվ 11-ՀՄ պետական վիճակագրական հաշվետվության ձևով տեղեկությունների հավաքագրման և ամփոփման աշխատանքների, այնպես էլ արդեն հավաքագրված տեղեկությունների որակով:

Եռամյա ծրագրով նախատեսված՝ Ազգային հաշիվների համակարգի «Ֆինանսական հաշիվների» հաշվարկների իրականացման նպատակով, հաշվետու

Ժամանակահատվածում համատեղ քննարկումներ են կազմակերպվել ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի, ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան մասնագետների հետ: Համատեղ քննարկումների արդյունքում մշակվել են ֆինանսական ոչ բանկային և ոչ ֆինանսական հատվածի վիճակագրական դիտարկման փաստաթղթերի ձևերի նախնական տարբերակները, որոնց հիման վրա ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԱՎԾ-ին են տրամադրվել պետական և ֆինանսական (բանկային համակարգի) հատվածների ֆինանսական հաշվի վերաբերյալ համապատասխան ամփոփ տվյալները: Մշակվել և ՀՀ ԿԲ ու ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան մասնագետների հետ համաձայնեցվել է նաև առևտրային ոչ ֆինանսական կազմակերպությունների ենթահատվածի (առևտրային) ֆինանսական հաշվի լրացման վիճակագրական դիտարկման փաստաթղթի (ֆինանսական գործիքների վերաբերյալ) ձևի նախագիծը և լրացման հրահանգը: Նշված հաշվետվային ձևով տնտեսության ոչ ֆինանսական հատվածի 10 արդյունաբերական կազմակերպություններում, փորձնական կարգով, ուսումնասիրվել և լրացվել են ֆինանսական հաշվի ցուցանիշներն ըստ տնտեսության առանձին հատվածների: Միաժամանակ, ուսումնասիրվել են ֆինանսական ոչ բանկային հատվածի կազմակերպությունների (ապահովագրական կազմակերպություններ և գրավատներ) գործունեության իրավական նորմատիվ ակտերը, հաշվապահական հաշվառման ձևերը, որոնց հիման վրա 3 ապահովագրական կազմակերպությունների համար լրացվել են «ֆինանսական հաշվի» ցուցանիշները:

Այնուամենայնիվ, ամփոփելով վերոնշյալը, հարկ է նշել, որ ֆինանսական հաշվի կազմման ծավալուն և բարդ լինելու հանգամանքներով պայմանավորված, աշխատանքների ամբողջական և ավարտուն տեսքով իրագործումը պահանջում է առավել երկարատև ժամանակահատված, ինչպես նաև առկա խնդիրների (մասնավորապես՝ փորձի պակաս և տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասի մոտ այդ հաշվի էության և նշանակության վերաբերյալ լիարժեք պատկերացումների ձևավորման անրաժեշտություն) լուծման համար անհրաժեշտ ֆինանսական և աշխատանքային լրացուցիչ ռեսուրսներ:

1.2. Արտադրություն (ծառայություններ)²

1.2.1. Արդյունաբերություն²

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 19 աշխատանքները (121001-121016, 121018, 121020, 121023) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 9-ը՝ տարեկան պարբերականությամբ): Վերանայվել են Ձև 1-արտ (ամսական) և 1-արտ (տարեկան) «Հաշվետվություն արդյունաբերական

² Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 16:

կազմակերպությունների արտադրանքի մասին» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգները (հաստատված ՀՀ ՎՊԽ 03.10.2003թ. թիվ 12-ն որոշմամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են 2003թ. մոնիտորինգում ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերաձևակազմման աշխատանքները:

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) ներդրմամբ պայմանավորված և դրա կատարելագործման նպատակով, արդյունաբերության վերաբերյալ ամբողջական, հավաստի և համընդգրկուն տեղեկատվության ստացման նպատակով, գազի և ջրի արտադրության և բաշխման ծավալները, ինչպես նաև թռչնի մսի արտադրության ծավալները ներառվել են արդյունաբերության ընդհանուր ծավալներում:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նպատակով մշակվել են արդյունաբերական արտադրանքի ծավալների ինդեքսների վերաբերյալ մեթատվյալները, իսկ 2003թ. հոկտեմբերից վերը նշված ոլորտների գծով ամփոփ տվյալները տեղադրվել են ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՄ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

1.2.2. Գյուղատնտեսություն³

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 43 աշխատանքները (122001-122036, 122038-122044 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության գծով վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել և մշակվել է թվով 26 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 4 հարցաթերթերով և 10 տեղեկանքներով (որոնցից 15-ը՝ բուսաբուծության, 8-ը՝ անասնապահության, 2-ը՝ բուսաբուծության և անասնապահության գծով, իսկ 15-ը՝ գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի): Ընդ որում, 8 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևեր, հարցաթերթեր և տեղեկանքներ հավաքագրվել են ամսական պարբերականությամբ, 6-ը՝ եռամսյակային և 26-ը՝ տարեկան:

2003թ. հունվարի 1-ից ընդլայնվել է գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցը՝ 200 գյուղական համայնք, յուրաքանչյուրում 38 գյուղացիական տնտեսություն, ընդամենը 7600 գյուղացիական տնտեսություն:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են գյուղատնտեսության և ձկնորսության ու ձկնաբուծության ոլորտները բնութագրող հիմնական ցուցանիշները, իսկ 2003թ. II եռամսյակից՝ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների արտադրության ծավալները ներկայացվել են ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի:

Բուսաբուծության ոլորտի վիճակագրության մեջ ներդրվել է ՏԳՏԴ-ն և աշխատանքներ տարվել անասնապահության ոլորտում վերջինս ներդնելու ուղղությամբ:

³Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 18:

1.2.3. Շինարարություն⁴

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 13 աշխատանքները (123001-123013 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շինարարության գծով վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել, մշակվել և ամփոփվել է թվով 9 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 4-ը՝ ամսական, 5-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակայի և տարեկան) մշակվել և ամփոփվել են հանրապետությունում իրականացված շինարարությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված շինարարական աշխատանքների ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Շարունակաբար իրականացվել են անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկումները: Ներդրվել է Ձև թիվ 1-կշ՝ «Բնակելի շենքերի, սոցիալ-մշակութային և արտադրական նշանակության օբյեկտների գործարկման և կապալային աշխատանքների կատարման մասին» պետական վիճակագրական ամսական հաշվետվության մշակման և ամփոփման համակարգչային ծրագիրը: Ձևավորվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը (համացանկը): Շինարարության ոլորտի վիճակագրության մեջ ներդրվել է ՏԳՏԴ-ն:

1.2.4. Տրանսպորտ⁵

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 20 աշխատանքները (124001 - 124020 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել և մշակվել է թվով 26 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 11-ը՝ ամսական, 7-ը՝ եռամսյակային, 1-ը՝ կիսամյակային և 7-ը՝ տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի գծով՝ 6 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, օդային տրանսպորտի՝ 8, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 2 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով: 124006 ծածկագրով «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» վիճակագրական աշխատանքը կատարվել է ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

«ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-8» նախագծի շրջանակում նախատեսվող «Ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի հետազոտության» իրականացման համար մշակվել են անհրաժեշտ ծրագրային նյութերը:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի և կապի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 22:

⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 24:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակյալի և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ տրանսպորտի տեսակների, ինչպես նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Տրանսպորտի վիճակագրության մեջ ներդրվել է ՏԳՏԴ-ն:

1.2.5. Կապ⁶

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 12 աշխատանքները (125001-125012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Կապի համակարգի գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 1 եռամսյակյալի և 9 տարեկան պարբերականությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակյալի և տարեկան) մշակվել և ամփոփվել են կապի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ կապի տեսակների, ինչպես նաև ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Կապի վիճակագրության մեջ ներդրվել է ՏԳՏԴ-ն:

1.2.6. Մանրաձախ առևտուր, այլ ծառայություններ (սպառողական շուկա)⁷

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 12 աշխատանքները (127004, 127005, 127007, 127009-127012, 127014, 127017, 127019, 127020, 127021 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (7 ամսական, 1 եռամսյակյալի, 4 տարեկան):

Սպառողական շուկայի գծով վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել և մշակվել է թվով 12 պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերով (որոնցից 9-ը՝ մանրաձախ առևտրի (5-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակյալի և 3-ը՝ տարեկան պարբերականությամբ), 2-ը՝ ծառայությունների (ամսական պարբերականությամբ) և 1-ը՝ մանրաձախ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ)):

Հանրապետության սպառողական սպրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ սպրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա սպրանքաշրջանառության ծավալի: Ընտրանքային դիտարկման նյութերն օգտագործվել են տեղեկատվական ամսական զեկույցներում:

ՏԳՏԴ-ին անցումով պայմանավորված, աշխատանքներ են իրականացվել առևտրի և ծառայությունների ոլորտների գործունեության տեսակների վերաձեռնվարման ուղղությամբ:

⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 25:

⁷ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 27:

1.2.7. Կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը⁸

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 6 աշխատանքներից (127001-127004, 127006-127007՝ 2-ը եռամսյակային և 4-ը տարեկան պարբերականությամբ) 4-ը կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2003թ. հունվարից ներդրվել են 1-Ֆ (127001 ծածկագրով աշխատանք), 2-Ֆ (127002 ծածկագրով աշխատանք), 6-Ֆ (127004 ծածկագրով աշխատանք), 1-ՏԳ և 1-ՏԳ(փոքր) (127003 ծածկագրով աշխատանք) նոր պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը, մշակվել և կազմվել են դրանց լրացման հրահանգները: Տարեկան ցուցանիշների կտրվածքով վերոհիշյալ հաշվետվությունների ձևերով վիճակագրական տեղեկության հավաքագրման համար կիրառվել է ընտրանքային մեթոդ: ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի գլխավոր համակցությունում առկա գործող կազմակերպություններից ընտրանքային մեթոդով ընտրվել է 2083 կազմակերպություն, որից 1187-ը՝ խոշոր և միջին, 896-ը՝ փոքր և գերփոքր կազմակերպություն: Նախապես ճշգրտվել են ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների գործունեության հիմնական տեսակի ծածկագրերն ըստ ՏԳՏԳ-ի:

Հարկ է նշել, որ 127003 և 127004 ծածկագրով աշխատանքները, համակարգչային ծրագրային փաթեթի մշակման ընթացքում առաջացած բարդություններով պայմանավորված (տեխնիկական առաջադրանքի ալգորիթմի բարդացում), պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերի տվյալների տարածման և ելքային աղյուսակների ստացման աշխատանքները չեն ավարտվել և գտնվում են ավարտի փուլում:

1.3. Գներ և սակագներ⁹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 56 աշխատանքները (131001-137005, 138000 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գների և սակագների գծով վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել և մշակվել է թվով 2 պետական վիճակագրական հաշվետվությունների և 2 դիտարկման ձևերով՝ ամսական պարբերականությամբ: Արդյունքում, տարվա ընթացքում հավաքագրվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և արտադրության միջոցների գնման գների գծով 72000, սպառողական գների՝ 6000 և արդյունաբերողների արտադրանքի գների վերաբերյալ 6096 վիճակագրական տվյալ: Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

- ✓ սպառողական գների ինդեքս (ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչներով),
- ✓ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս (ըստ հանրապետության և հետազոտվող 11 արդյունաբերական ճյուղերի),

⁸ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 29:

⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 30:

- ✓ գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման 3 ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- ✓ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),
- ✓ բեռնառաքումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթգծով, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),
- ✓ արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել են եռամսյակային կտրվածքով, 3 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և այլ երկրների:
- ✓ 87 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետազոտվող 11 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է սղաճի հաշվարկ հանրապետությունում):

2003թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար աշխատանքներ են տարվել սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ (մասնավորապես՝ դիտարկվող զամբյուղի (ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների) կշիռների վերահաշվարկման, փոփոխման, ճշգրտման նպատակով): Կատարվել են նաև տեխնիկական բնութագրերի՝ չափման միավորի, մակնիշի և այլ չափանիշների, փոփոխություն ու ճշգրտում:

Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 140000 վիճակագրական տվյալ:

Որոշակի աշխատանքներ են տարվել արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի, արտաքին առևտրի, շինարարության գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և ներդրման ուղղությամբ (մասնավորապես՝ վերանայվել և ճշգրտվել են հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ու ուսումնասիրվող արտադրատեսակների ցանկը, գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական խնդիրները և այլն):

Հայաստանը ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀՄ) անդամակցության կապակցությամբ մշակվել է նոր մեթոդաբանություն՝ ՀՀ-ում սպառողական գների և արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման համար: Նշված ինդեքսները (որպես լրացուցիչ աշխատանք) վերահաշվարկվել են սկսած 2003թ. հունվար ամսից յուրաքանչյուր ամսվա համար՝ որպես բազիսային ժամանակաշրջան ընդունելով 2002 թվականը:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների փորձնական հաշվարկներ են կատարվել նաև ըստ ՏԳՏԴ-ի:

Արտաքին առևտրի ինդեքսների նախնական մշակումների ընթացքում ներմուծվող (արտահանվող) ապրանքատեսակների զգալի քանակով բացակայության, գնային մեծ տարբերությունների (որոնք առաջ են բերել գների ինդեքսների կտրուկ տատանումներ) հետ կապված մեթոդաբանական խնդիրները լուծելու նպատակով, կատարվել է ներմուծման (արտահանման) միջին գների ստուգում և դրանց միջոցով սահմանային գործակիցների հաշվարկ, ինչը հնարավորություն է տվել հայտնաբերել ոչ ներկայացուցչական և գնային կտրուկ փոփոխություններով ապրանքատեսակներ:

ՀՀ բոլոր տարածաշրջանների 200 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 6000 գյուղացիական տնտեսություններում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 սպրանքատեսակներ)) և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ):

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ) և տարեկան կտրվածքներով:

1.4. Աշխատանքի շուկա¹⁰

1.4.1. Զբաղվածություն¹⁰

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 9 աշխատանքներից (141001-141009 ծածկագրերը) 8-ը կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (1 ամսական (ամփոփ), 2 եռամսյակային (ամփոփ և սկզբնական), 1 կիսամյակային և 5 տարեկան (ամփոփ և սկզբնական)):

Զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 14 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 2-ը՝ ամսական, 4-ը՝ եռամսյակային և 8-ը տարեկան պարբերականությամբ):

141009 ծածկագրով՝ «Արտաքին աշխատանքային միգրացիա» վիճակագրական աշխատանքը «Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագրով» նախատեսելիս (ծրագրումը՝ 2000թ., իրականացումը՝ 2003թ.) հանրապետությունում աշխատուժի արտահանմամբ և ներմուծմամբ զբաղվող կազմակերպություններին գործունեության իրականացման արտոնագիր էր տրամադրում և մոնիթորինգ էր իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, սակայն, համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, սկսած 2002թ.-ից, վերոնշյալ կազմակերպությունները համարվեցին չլիցենզավորվող: Հարկ է նշել, որ նման տեղեկատվություն չէր տնօրինում նաև ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վարչությունը, այդ իսկ պատճառով «Արտաքին աշխատանքային միգրացիա» վիճակագրական աշխատանքը ՀՀ ԱՎԾ կողմից չիրականացվեց:

Աշխատանքներ են տարվել զբաղվածության վիճակագրության ոլորտում Տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգչից ՏԳՏԴ-ին անցման ուղղությամբ:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նպատակով, մշակվել են բնակչության զբաղվածության, պաշտոնական գործազրկության և վարձու աշխատողների

¹⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 35:

աշխատանքի վարձատրության վերաբերյալ մեթատվյալները, իսկ 2003թ. հոկտեմբերից սկսած վերը նշված ոլորտների գծով ամփոփ տվյալները տեղադրվել են ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՍ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

1.4.2.Բնակչության կենսամակարդակ եվ աշխատավարձ¹¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 9 վիճակագրական աշխատանքները (142001-142006, 142008-142010 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

142001-142003 ծածկագրերով 3 վիճակագրական աշխատանքները վերաբերում են բնակչության դրամական եկամուտներին և ծախսերին: Դրանք իրականացվել են ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

142004-142010 ծածկագրերով աշխատանքները վերաբերում են բնակչության եկամուտներին (ՀՀ մարզերով և ըստ տնտեսության ճյուղերի ու հատվածների), մասնավորապես՝ աշխատանքի վարձատրությանը և կազմակերպությունների կողմից աշխատուժի պահպանման համար կատարված ծախսերին:

Դրանցից մեկ աշխատանք իրականացվել է ամսական (ամփոփ և սկզբնական), 2-ը՝ եռամսյակային (ամփոփ և սկզբնական) և 3-ը՝ տարեկան (ամփոփ և սկզբնական) պարբերականությամբ:

Ընդ որում, տվյալ վիճակագրական աշխատանքների համար վիճակագրական տեղեկություններ հավաքագրվել և մշակվել են 6 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (1 ամսական, 2 եռամսյակային և 3 տարեկան պարբերականությամբ):

Աշխատանքներ են տարվել աշխատանքի վիճակագրության ոլորտում Տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգչից ՏԳՏԴ-ին անցման ուղղությամբ:

1.5. Բիզնես-ռեզիստը¹²

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքներից մեկը (150001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետում, իսկ 150002 ծածկագրով վիճակագրական աշխատանքը չի կատարվել «ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-6» պայմանագրի շրջանակում «Բիզնես ռեզիստը» նախագծի ֆինանսավորման բացակայության պատճառով (Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից պայմանագիրը ստորագրվել է 2003թ. դեկտեմբերին):

Հաշվի առնելով «Վիճակագրական բիզնես ռեզիստրի տեղեկանք-հարցաթերթ»-ի և «Իրավաբանական անձանց կողմից բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի տվյալների մասով ներկայացվող տեղեկանք-հարցաթերթի լրացման հրահանգ»-ի հաստատման մասին ՀՀ ՎՊԽ որոշման ընդունմանը հաջորդած ժամանակշրջանում (23.07.2001թ.)

¹¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 36:

¹² Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 38:

ՀՀ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև պայմանավորված հարցաթերթերի կատարելագործման անհրաժեշտությամբ, ՀՀ ՎՊԽ 14.03.2003թ. թիվ 04-Ն և 05-Ն որոշումներով հաստատվել են իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի հարցաթերթերը (տարեկան) և դրանց լրացման հրահանգները:

Ծրագրով նախատեսված վիճակագրություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ վարչական հիմնական ռեզիստրներից սահմանված կարգով ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ, որոնք արդիականացրել են բիզնես ռեզիստրի որակը:

Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ամփոփվել են ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական մոնիթորինգում առկա կազմակերպությունների ցանկերը:

2003թ. իրականացվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններից 2002թ. տարեկան արդյունքներով մոնիթորինգում առկա 10763 իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը, հարցաթերթերի ստուգումը, ծածկագրումը, մուտքագրումը, տվյալների ամփոփումը և ընդհանուր վերլուծությունը:

1.6. Վիճակագրական դասակարգիչներ¹³

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 4 վիճակագրական աշխատանքները (170001-170004 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Շարունակվել են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, մի շարք պետական վիճակագրական հաշվետվություններ և դրանց լրացման հրահանգներն արդեն իսկ համապատասխանեցվել են ՏԳՏԳ-ով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների և դրանց խմբավորման սկզբունքների ու առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ համապատասխան առանձին սեմինարներ են կազմակերպվել ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների համար:

Աշխատանքներ են տարվել «Արտադրանքի դասակարգչի» ազգային տարբերակի մշակման ուղղությամբ, Եվրոհամայնքի նմանատիպ Սի Փի Էյ և ՊՈՌԿՈՄ դասակարգումների հիման վրա: Մշակվել և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից պետական գրանցման են ենթարկվել «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի՝ «Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային տնտեսություն», «Ձկնորսություն և ձկնաբուծություն», «Հանքագործական արդյունաբերություն» բաժինները և դրանց պարզաբանումները (հմ 7-2003 առ 03.07.2003.):

ՀՀ ՎՊԽ 22.07.2003թ. թիվ 09-Ն որոշմամբ հաստատվել է դասակարգչի նշված բաժինների՝ 2004թ. հունվարի 1-ից պետական վիճակագրությունում պարտադիր կիրառման հանգամանքը:

2003թ. ընթացքում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության փորձաքննության են ներկայացվել դասակարգչի՝ «Մշակող արդյունաբերության արտադրանք» բաժնի «Սննդամթերք, ներառյալ խմիչքները և ծխախոտը», «Մանածագործվածք և կարի արտադրանք», «Կաշի, կաշվե արտադրանք, կոշիկ», «Բնափայտ և փայտե արտադրատեսակներ», «Թուղթ և սովարաթուղթ, հրատարակչական գործ» հատվածները, զուգահեռ շարունակելով նաև դասակարգչի մյուս բաժինների և դրանց պարզաբանումների մշակման աշխատանքները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2002 թվականի ծրագրի, աշխատանքներ են իրականացվել նաև «Զբաղմունքների ազգային դասակարգչի» մշակման ուղղությամբ՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի» (որպես կատարող) հետ համատեղ: Նշված աշխատանքի իրականացման արդյունքում, վերոհիշյալ ինստիտուտի կողմից մշակվել և ՀՀ ԱՎԾ մասնագետների հետ համատեղ քննարկումներից հետո, «Զբաղմունքների դասակարգչի» մաս 1-ը հավանության է արժանացել ՀՀ ՎՊԽ 22.07.2003թ. թիվ 12 արձանագրային որոշմամբ, որն այնուհետև հաստատվել և գործողության մեջ է դրվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից 01.01.2004թ.-ից:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹⁴

Ծրագրով նախատեսված թվով 7 վիճակագրական աշխատանքներից (200001-200004 և 300001-300003 ծածկագրեր) 6-ը կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2003թ. ընթացքում, ամսական պարբերականությամբ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի, դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից հավաքագրվել են հիմնադրամի բյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից՝ ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նպատակով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ, մշակվել են ՀՀ կենտրոնական և համախմբված կառավարության, արտաքին պետական պարտքի վերաբերյալ մեթատվյալները, իսկ

¹³ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 39:

¹⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 40:

2003թ. հոկտեմբերից սկսած վերը նշված ոլորտների գծով ամփոփ տվյալները տեղադրվել են ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՍ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

ՀՀ ԿԲ-ից պարբերաբար ստացվել են նաև արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

200004 ծածկագրով «Հարկային պարտավորություններն ու գերավճարները» ամսական պարբերականությամբ վիճակագրական աշխատանքը չի իրականացվել, քանզի ըստ առանձին հարկատեսակների հարկային պարտավորությունների և գերավճարների վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից չի տրամադրվել այդ կառույցում 2003թ.-ի ընթացքում գերավճարների վերաբերյալ միասնական տեղեկատվական բազայի բացակայության պատճառով: Բացի այդ, մի հարկատեսակով վճարողների մոտ պարտավորությունների առաջացման, իսկ այլ հարկատեսակներով գերավճարների առկայության դեպքում, հաշվի առնելով անուղղակի և ուղղակի հարկերի գծով առաջացած գերավճարների հաշվանցման առանձնահատկությունները, նշված տեղեկությունների տրամադրումն անհնար է և պահանջում է լրացուցիչ ճշգրտումների երկար շղթա:

Ուստի, հիմք ընդունելով, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության առաջարկությունները, ՀՀ ՎՊԽ 01.07.2003թ. թիվ 11 արձանագրային որոշման համաձայն, 2003թ. համար աշխատանքի կատարման ժամկետը երկարաձգվեց և արդյունքում չներառվեց նաև «2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում»):

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ¹⁵

Ծրագրով նախատեսված սույն հատվածի թվով 50 վիճակագրական աշխատանքներ (411001-411012, 412001-412019, 420001-420006, 430001-430003, 430007-430010, 440001, 440002, 450001, 460001) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (28 ամսական, 17 եռամսյակային և 5 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 10 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (4-ը՝ նյութական ռեսուրսների, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 2-ը՝ բնական գազի ներմուծման, 1-ը՝ զբոսաշրջության և 2-ը՝ միջազգային ծառայությունների առևտրի գծով):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ ԿԲ-ից և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկանքները:

Կազմվել են.

¹⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 41:

-2002թ. IV եռամսյակի և տարեկան, 2003թ. I, II և III եռամսյակների ՀՀ վճարային հաշվեկշիռները և ՀՀ միջազգային ներդրումային դիրքը:

Առաջին անգամ, Ծրագրից դուրս, հաշվարկվել են՝ 2003թ. II և III եռամսյակների համար ՀՀ համախառն արտաքին պարտքը և արտաքին ակտիվները, ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Առաջին անգամ մշակվել և հրատարակվել է 2002-2003թթ. 9 ամիսներում ՀՀ-ում կատարված օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության ոլորտ-երկիր կտրվածքի:

Հավաքագրվել են.

-ամսական կտրվածքով՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես՝ բեռնամաքսային հայտարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծման և արտահանման ծավալների վերաբերյալ,

-եռամսյակային կտրվածքով՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ, ապրանքներ ձեռքբերված տրանսպորտային կայաններում, ֆինանսական և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նպատակով, մշակվել են վճարային հաշվեկշիռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի և ապրանքների արտաքին առևտրի վերաբերյալ մեթատվյալները, իսկ 2003թ. հոկտեմբերից սկսած վերը նշված ոլորտների գծով ամփոփ տվյալները տեղադրվել են ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՄ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹⁶

5.1.Ժողովրդագրություն¹⁷

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 19 վիճակագրական աշխատանքների (511001-511008, 512001-512006, 513001-513005) կատարումն ապահովվել է ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Շարունակվել են բնակչության բնական շարժի, միգրացիայի, սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման աշխատանքները:

2003թ. հունվարի 1-ի դրությամբ բոլոր գյուղական (871) համայնքներում անց է կացվել հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառում: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, առկա և մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝

¹⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 47:

¹⁷ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 48:

գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների՝ մարզային գործակալությունների կողմից հավաքագրվել են նաև բոլոր գյուղական բնակավայրերի հիմնական ցուցանիշները բնութագրող ամփոփ տեղեկագրեր, տարածաշրջանային կտրվածքով:

Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է հանրապետության գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի և բնակչության թվաքանակի:

Ամսական պարբերականությամբ ՀՀ արդարադատության նախարարության ԶԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ հանրապետության մարզերի և տարածաշրջանների բաշխումով, որոնց հիման վրա ստացվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները (թվով 22 աղյուսակ):

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՆԳ տարածքային անձնագրային բաժիններից ստացված ձև թիվ 19՝ «Եկողի հասցեաթերթ»-երի և ձև թիվ 20՝ «Մեկնողի հասցեաթերթ»-երի մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ տվյալներ, որոնց հիման վրա կազմվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները (թվով 12 աղյուսակ):

Բնական շարժի ամսական և մեխանիկական շարժը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների հիման վրա տարեկան և եռամսյակային պարբերականությամբ արդիականացվել են հանրապետության բնակչության ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով վարվող թվաքանակի ցուցանիշները:

Վերանայվել են 2002թ. ժողովրդագրական ցուցանիշները՝ հիմք ընդունելով ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված մշտական բնակչության թվաքանակը և սեռատարիքային կազմը: Արդյունքում, վերահաշվարկվել են ծնելիության և մահացության ընդհանուր և տարիքային կտրվածքով ներկայացվող ցուցանիշները:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացվել է ՀՀ-ում ԶԿԱԳ մարմինների և բուժական հաստատությունների կողմից վարչական հաշվետվություններով ծնունդների և մահերի գրանցումների ամբողջականության և որակի ուսումնասիրություն: Այն իրականացվել է երկու փուլով՝ առաջինում ընդգրկելով Երևան քաղաքի Շենգավիթի թաղային համայնքը, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերից ընտրված մեկական քաղաքների և մեկական նախկին վարչական շրջանների գյուղական տարածքները, որոնց նախնական ամփոփումն ու ներկայացումն իրականացվել է 2003թ. հոկտեմբերի 29-ին՝ ՀՀ առողջապահության նախարարությունում: Երկրորդ փուլով ընդգրկվել են հանրապետության մյուս 6 մարզերից ևս մեկական քաղաքների և մեկական նախկին վարչական շրջանների գյուղական տարածքները:

Հանրապետության մի շարք քաղաքային համայնքների ղեկավարների կողմից իրենց համայնքների մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների պաշտոնական գնահատականների կապակցությամբ, ՀՀ ԱՎԾ-ին հղված (ՀՀ կառավարության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջոցով) անհամաձայնություններով

պայմանավորված, տրվել են մանրամասն գրավոր մեթոդաբանական պարզաբանումներ (Երևան քաղաքի Նորք-Մարաշ, Գավիթաշենի և Արաբկիրի թաղային համայնքների, Արմավիրի մարզի՝ ք. Արմավիր և ք. Մեծամոր, Գեղարքունիքի մարզի՝ ք. Վարդենիս և Լոռու մարզի՝ ք. Ստեփանավան, Կոտայքի մարզի՝ ք. Չարենցավան, ք. Բյուրեղավան և ք. Հրազդան, Սյունիքի մարզի՝ ք. Դաստակերտ, Տավուշի մարզի՝ ք. Բերդ և ք. Դիլիջան):

ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցության նպատակով, մշակվել են բնակչության թվաքանակը բնութագրող մեթատվյալները, իսկ 2003թ. հոկտեմբերից սկսած վերը նշված ոլորտների գծով ամփոփ տվյալները տեղադրվել են ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՍ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

5.2.-5.7.Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն)¹⁸

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 72 վիճակագրական աշխատանքներից (520001-520010, 530001-530007, 540001, 540002, 540004-540011, 550001, 550002, 550004-550009, 550011, 550013, 560001-560017, 560019-560025, 570001, 570003-570010, 570014 և 570015 ծածկագրեր) 71-ը կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վիճակագրական տեղեկությունը հավաքագրվել է 72 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, ինչպես նաև հիմնվելով ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» ամսական և ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրերի վրա:

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 37 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 4-ը՝ կիսամսյակային և 25-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամսյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 10-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են սոցիալական ոլորտին առնչվող պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել ներառված ցուցանիշների կազմում:

Վարչական ռեգիստրների ստեղծման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ԱՎԾ-ն համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում ներդրվել է 1-օտարում վարչական հաշվետվության ձևը, իսկ դրա հիման վրա՝ 1-օտարում «Անշարժ գույքի օտարման մասին» եռամսյակային պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը,

- ՀՀ գիտության և կրթության նախարարության համակարգում վերջնականապես ձևավորվել է 1-հանրակրթություն «Հաշվետվություն հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևը,

- ՀՀ առողջապահության նախարարության հետ շարունակվել են աշխատանքները համապատասխան պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևերի մշակման ուղղությամբ,

- ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի հետ շարունակվել են աշխատանքները կոմիտեի համակարգում վարչական ռեգիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման աշխատանքները,

- ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում շարունակվել է գործնական օժանդակությունը վարչական վիճակագրական ռեգիստրի ամբողջական ձևավորման գործընթացում:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների ստեղծման և վարման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվել սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները: Մշակվել են և փորձնական ներդրման փուլում են բնապահպանության համակարգում ֆինանսական ներդրումների և ծախսերի ընդհանրացված հաշվառման ձևերը:

Հարկ է նշել, որ 520003 ծածկագրով «Հաշմանդամների թվաքանակը» կիսամյակային պարբերականությամբ վիճակագրական աշխատանքի կատարումը, համաձայն ՀՀ ՎՊԽ 01.07.2003թ. թիվ 11 արձանագրային որոշման, տեղափոխվել է 2004թ. I եռամսյակ, պայմանավորված վարչական ռեգիստրի բազայում տվյալների ճշգրտման գործընթացով (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 23.062003թ. թիվ 229 գրությունը):

¹⁸ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 50:

5.8. Տնային տնտեսությունների հետազոտություններ¹⁹

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով թվով 13 վիճակագրական աշխատանքները (580001-580013 ծածկագրեր) ամբողջությամբ կատարվել են:

2003թ. ընթացքում համաձայն Ծրագրի, անց է կացվել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն՝ ընտրանքում ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը: Ընտրանքի չափը կազմել է 4644 տնային տնտեսություն: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում հետազոտվել է 387 տնային տնտեսություն, որոնց վերաբերյալ տեղեկություններ են հավաքագրվել ինչպես հարցաթերթով, այնպես էլ տնային տնտեսությունների կողմից ամենօրյա պարբերականությամբ լրացվող «Ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների» օրագրով: Ընտրանքը կառուցված է եղել տնային տնտեսությունների ամենամսյա ռոտացիայի (փոխարինում) վրա:

Հավաքագրված տվյալների ամփոփումն ըստ ցուցանիշների (եկամուտներ, ծախսեր, հիմնական սննդամթերքի սպառումը) կատարվել է եռամսյակային կտրվածքով:

Հետազոտության հիմնական արդյունքներն ընդգրկվել են «Աղքատություն և պարենային ապահովություն» վիճակագրական եռամսյակային տեղեկագրի մեջ:

2003թ.-ին շարունակվել են 2002թ. տվյալների բազայի մաքրման և կազմավորման աշխատանքները: Կազմավորված և անվանագերծված տվյալների բազան հետագա վերլուծության համար տրամադրվել է Աղքատության կրճատման ռազմավարության մշակման խորհրդին, Համաշխարհային բանկին և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի սոցիալական բարեփոխումներ (ՊԱԳԿՈ) միջազգային կազմակերպությանը:

Մշակվել է ՀՀ տնային տնտեսությունների հասցեների բազան՝ ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալների հիման վրա:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) «Աղքատության մոնիթորինգ»-ի շրջանակում մշակվել և պատրաստվել են 2004թ.-ին իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության նոր հարցաթերթը և օրագիրը: Մշակվել է 2004թ. նախատեսվող ժամանակի օգտագործման պիլոտային հետազոտության հարցաթերթը և օրագիրը: Մշակվել է պիլոտային հետազոտության միջոցառումների ցանկը և ժամանակացույցը:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ կառավարությանն է ներկայացվել նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկը միջին ընթացիկ գներով՝ 2 տարբերակով: Դրանք են.

-նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ հաշվարկված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով,

-նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ հաշվարկված Համաշխարհային բանկի Չարգացման վարկի հաշվին ֆինանսավորված և ՀՀ վիճվարչության կողմից 1996թ. նոյեմբեր-դեկտեմբերին իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա ձևավորված սննդամթերքի

¹⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 56:

փաստացի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով:

250 ապրանքատեսակների գծով սպառողական գների ինդեքսի հաշվարկի համար 2003թ. դեկտեմբերին մշակվել է տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքը:

5.9. Պարենային ապահովություն²⁰

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների (590001 և 590002 ծածկագրեր) կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական ոլորտի, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները:

Հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների փորձագետների և հանրապետության շահագրգիռ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները՝ վերանայվել և փոփոխվել է «Աղքատություն և պարենային ապահովություն» վիճակագրական տեղեկագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները, կազմվել են 2002թ. առանձին ապրանքախմբերի և ազգային պարենային հաշվեկշիռները:

Իրականացվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ստեղծված պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի համար տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման և վերոհիշյալ կազմակերպության www.fsdatabase.org ինտերնետային էջում տեղադրման աշխատանքները:

«Պարենային և սննդի ապահովության հայեցակարգեր, վերլուծություն և հաղորդակացություն» սեմինար-խորհրդակցության և ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ կազմակերպված աշխատանքային քննարկումների արդյունքում մշակվել է «Աղքատություն և պարենային ապահովություն» վիճակագրական տեղեկագրի վերլուծական հատվածը:

Մասնակցություն ունենալով հանրապետությունում բերքի կանխատեսման մշտապես գործող աշխատանքային խմբի աշխատանքներին՝ համաձայն սահմանված կարգի և ժամկետի, խմբին է ներկայացվել պարենային ապահովության ոլորտի տեղեկատվություն:

²⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 57:

6.ՀՀ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ²¹

Ծրագրի 600001 ծածկագրով նախատեսված վիճակագրական աշխատանքը՝ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների մշակմանը և ամփոփմանն ուղղված միջոցառումները, ամբողջությամբ կատարվել է:

2003թ. հունվարից իրականացվել են ՀՀ 2001թ. մարդահամարի ելքային աղյուսակների ճշգրտման աշխատանքները՝ մարդահամարի տվյալների բազայից ստացվող նախնական տվյալների հիման վրա:

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացվել են «Բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային բաժանման», «Մշտական բնակչության ժողովրդագրական բնութագրերը», «Մշտական բնակչության կրթական մակարդակը», «Մշտական բնակչության տնտեսական բնութագրերը», «Մշտական բնակչության ազգային կազմը», «Մշտական բնակչության տեղաշարժերը (միգրացիան)», «Բնակչության տնային տնտեսությունների քանակն ու կազմը» և «Բնակչության պայմանները» բաժինների ելքային աղյուսակները:

2003թ. հունիսին ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով նախնական տվյալները («Բնակչության թվաքանակն ու վարչատարածքային բաշխվածությունը», «Բնակչության ժողովրդագրական բնութագրերը», և «Բնակչության կրթական մակարդակը» բաժինները) տեղադրվել են ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

2003թ. ընթացքում հրապարակման են պատրաստվել 12 վիճակագրական ժողովածուներ Հայաստանի Հանրապետության, ք. Երևանի և 10 մարզերի կտրվածքով՝ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա: Դրանցում տեղ են գտել խորհրդային տարիներին Հայկական ԽՍՀ-ում անցկացված բոլոր մարդահամարների վերաբերյալ պատմական համառոտ ակնարկը, Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրողություն դարձած ՀՀ 2001թ. մարդահամարի անցկացման նկարագրությունը:

«Հայաստանի Հանրապետություն» հրապարակումը ներառում է նաև ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը, մարդահամարի անցկացմանն առնչվող իրավական ակտերը և այլ փաստաթղթերի ցանկը, մարդահամարի կազմակերպման փուլերի մանրամասն նկարագիրը:

2003թ. II կիսամյակում զուգահեռ իրականացվել են նաև հիշյալ ժողովածուների ռուսերեն և անգլերեն լեզուներով թարգմանչական և խմբագրական աշխատանքները:

7.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ²²

Համաձայն Ծրագրի, նախատեսված էր իրականացնել 8 վիճակագրական հետազոտություն: Ընդ որում, դրանցից 3-ը կամ 37.5%-ն իրականացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ 5-ը՝ միջազգային ծրագրերի մասնագիտական ու

²¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 58:

²² Տես՝ Ծրագիր, Հավելված I, էջ 59:

ֆինանսական օժանդակությամբ (3-ը՝ ՏԱՄԻՍ ծրագրով, 1-ը՝ Շվեդական միջազգային համագործակցության Չարգացման գործակալության և 1-ը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության աջակցությամբ):

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին նախատեսված 3 վիճակագրական հետազոտություններից ամբողջությամբ իրականացվել են 2-ը (նախատեսվածի 75%-ը), մասնակիորեն կատարվել է 1-ը: Այսպես.

ՀՀ պետական բյուջեով իրականացվել է.

- «Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն»-ը,

- «Տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտություն»-ը,

ՀՀ պետական բյուջեով նախատեսված, բայց մասնակիորեն իրականացված հետազոտությունը «Մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կամակերպությունների եռամսյակային պարբերականությամբ ընտրանքային հետազոտություն»-ն է: Ընտրանքի բազայի բացակայության, իսկ ապա ընտրանքի համար կազմակերպությունների ցանկների ճշգրտման պատճառով չի իրականացվել 2003թ. I-III եռամսյակներում նախատեսված հետազոտությունը:

Ընտրանքի բազայի ամբողջականացում հնարավոր չի եղել իրականացնել, քանզի ՏԱՄԻՍ ծրագրով նախատեսված «Վիճակագրություն-6» պայմանագրի շրջանակում, ստորև հիշատակված՝ «Բիզնես-ռեզիստր» նախագիծը չի ֆինանսավորվել: Գրափոխարեն, IV եռամսյակում հետազոտության համար հիմք է ընդունվել այդ պահի դրությամբ ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեզիստրում առկա, ոչ ամբողջական տեղեկատվական բազան:

Հարկ է նշել, որ աշխատանքի վիճակագրության ընթացիկ հաշվառման դաշտում առավելապես ընդգրկված են վարչական ռեզիստրներ հանդիսացող կազմակերպություններ, ինչը խոչընդոտում էր սեփական ռեզիստր ստեղծելու գործընթացը: Արդյունքում, 2002թ. իրականացված նույնանուն հետազոտության ընտրանքային համակցության մեջ հայտնվել էին տասնյակ կազմակերպություններ, որոնք ընդգրկված էին ընթացիկ հաշվառման դաշտում: Այդ հանգամանքն անդրադարձել էր հետազոտության ընթացքի և արդյունքների որակի վրա, ուստի ողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով աշխատանք է ծավալվել հաշվետու կազմակերպությունների, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների հետ դրանց ցանկը ճշգրտելու ուղղությամբ՝ ընտրանքային համակցության մեջ կրկնահաշվարկը բացառելու նպատակով:

ՏԱՄԻՍ ծրագրով նախատեսված 3 վիճակագրական հետազոտություններ չեն իրականացվել, «Վիճակագրություն-6» պայմանագրի շրջանակում ֆինանսավորման բացակայության պատճառով (Եվրոստատի կողմից պայմանագիրը ստորագրվել է 2003թ. դեկտեմբերին): Այդ հետազոտություններն էին.

1.«Գյուղատնտեսության վիճակագրություն»,

2.«Աշխատուժի ընտրանքային հետազոտություն (մանկական զբաղվածություն)»,

3.«Բիզնես ռեզիստր»:

Շվեդական միջազգային համագործակցության Չարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ իրականացվել է «Հանրապետության հաշմանդամ բնակչության ընտրանքային հետազոտությունը»:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆինանսական աջակցությամբ և ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ նախատեսված «Մահացության, ինչպես նաև մանկամահացության իրավիճակի ուսումնասիրությունը հանրապետության առանձին մարզերում» հետազոտությունը չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով:

8. ՏԵՂԵԿԱՏՎԱԶՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ²³

8.1-8.5. Վիճակագրական ժողովածուներ (տարեգրքեր), տեղեկագրեր, հրատարակումներ մամուլում, մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, 2003թ.-ին, ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 130 անուն վիճակագրական հրապարակումներ՝ ներառյալ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն լեզուներով):

Ծրագրով նախատեսված 31 վիճակագրական ժողովածուներից 30-ը կամ 96.8%-ը նախատեսված էր հրապարակել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Փաստացի հրապարակվել են 28-ը կամ 90.3%-ը (27-ը կամ 96.4%-ը՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ): 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանցից 13-ի թղթային տարբերակները դեռևս չէին տարածվել: Չեն հրապարակվել 3 ժողովածուներ կամ նախատեսվածի 9.7%-ը:

ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվել են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամլո հաղորդագրություններ, զեկույցներ) ամփոփված նյութերի հիման վրա: Ձեկույցների բովանդակությունը ներկայացվել է ըստ ԱՄՀ մշակած ՏՏԸՀ հատվածների:

Ամսական զեկույցները ներկայացվել են հակիրճ, եռամսյակայիններն՝ առավել մանրամասն, իսկ տարեկաններն ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային զեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Ձեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ գետնի վրա են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am>, ինչպես նաև ԱՄՀ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> ինտերնետային էջերում:

²³ Տես՝ Ծրագիր, Հավելված III, էջ 60:

ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերեն լեզվով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում [http://docs.armstat.am/nsdp/`](http://docs.armstat.am/nsdp/) երկրի համապատասխան տվյալները:

«Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003» վիճակագրական ժողովածուն (հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով) տպագրվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՅուԷսԱյԻԴ-ի) Հայաստանի սոցիալական բարեփոխումներ (ՊԱԴԿՈ) ծրագրի ֆինանսական օժանդակությամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, հրապարակվել են նախատեսված **19 անուն վիճակագրական տեղեկագրեր** (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 84) և 13 վիճակագրական զեկույցներ: Չեն պատրաստվել 3-ը:

Համաձայն Ծրագրի, պատրաստվել են. ամսական պարբերականությամբ՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», եռամսյակային պարբերականությամբ՝ «ՀՀ սոցիալ - տնտեսական վիճակը», ամսական պարբերականությամբ՝ «ՀՀ սպառողական գների ինդեքսը», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամագրվելու վերաբերյալ» (շնորհանդեսը տեղի է ունեցել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում 25.11.2003թ.-ին) մամլո հաղորդագրությունները:

Համաձայն Ծրագրի, ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները (ներառյալ նաև Երևան քաղաքի գործակալությունը) հրապարակել են «Մարզի (ք. Երևանի) սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցներ (պարբերականությունը հաշվի առած 44) և վիճակագրական 21 անուն զեկույցներ (պարբերականությունը հաշվի առած՝ 33): ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները (ներառյալ Երևան քաղաքի գործակալությունը) 2003թ. ընթացքում պատրաստել են, պարբերականությունը հաշվի առած, ընդհանուր թվով 347 վիճակագրական զեկույց:

Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ԱՎԾ միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» 21.06.2001թ. հանաձայնագրի 23 կետի, ՀՀ ԿԲ-ին 4 ամսական, 13 եռամսյակային, 4 տարեկան և 3 միանվագ (ըստ անհրաժեշտության) պարբերականությամբ տրամադրվել է վիճակագրական տեղեկատվություն:

8.6. Վիճակագրական տեղեկատվության տարածումը ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի միջոցով և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի գործունեությունը

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի կատարելագործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: 1999թ.-ից գործող ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջին վիճակագրական տեղեկատվություն սպառողները դիմել են մոտ 87000 անգամ, միայն 2003թ. ընթացքում ինտերնետի ՀՀ ԱՎԾ հանգույց են այցելել 36000 անգամ, որը 50%-ով ավելի է 2002թ. համապատասխան ցուցանիշից:

Ներկայումս Ինտերնետի միջոցով հասանելի է նաև ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի էլեկտրոնային համացանկը, որը թարմացվում է գրադարանի նոր գրականությամբ համալրմանը զուգընթաց:

Աշխատանքներ են տարվել կորպորատիվ ցանցի միջոցով ՀՀ ԱՎԾ ինտերնետային www.armstat.am էջը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներին (մարզային գործակալություններին) հասանելի դարձնելու ուղղությամբ:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2003թ. տարեվերջին առկա է եղել 6100 միավոր վիճակագրական գրականություն (2002թ.՝ 5521 միավորի դիմաց), նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 110.5%:

Վիճակագրական գրականությունը 2003թ.-ին համալրվել է աշխարհի տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից ստացված (ՄԱԿ, ԱՄՀ, Համաշխարհային Բանկ, Եվրոստատ, ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի և այլն), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին: 2003թ. ՀՀ ԱՎԾ հրապարակած 130 անուն վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարե-գրքեր, տեղեկագրեր և վիճակագրական զեկույցներ) 2-ական օրինակներ տեղադրվել են գրադարանում: ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում այցելուների գրանցումը սկսվել է 2002թ. մայիսից: 2003թ.-ին ծառայություն է մատուցվել 976 այցելուի (զիտական մարմիններից (24%), կրթական ոլորտից, մասնավորապես՝ դասախոսական անձնակազմ, ուսանողներ և ասպիրանտներ (36%), պետական մարմինների (23%), լրատվամիջոցների ներկայացուցիչներ (8.5%), միջազգային կազմակերպություններ (5%), քաղաքացիներ (3.5%) և այլն):